Հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի

և իրավունքի ինստիտուտի տնօրեն,

քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ

Է. Հ. Օրդուխանյան

«24» 06 2026 թ.

Առաջատար կազմակերպության կարծիքը

Սերգեյ Լյովայի Ղազինյանի

«Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը և զոհերի իրավունքների պաշտպանությունը» թեմայով ԺԲ.00.02. - «Հանրային իրավունք- սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ **թեկնածուական ատենախոսության վերաբերյալ.**

Ներկայացված թեկնածուական ատենախոսությունը նվիրված է մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի և զոհերի իրավունքների պաշտպանության հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

Քննարկվող հետազոտության արդիականությունը մեր կարծիքով պայմանավորված է թեմայի հրատապությամբ: Ներկայումս հրատապ բնույթ են ստացել մարդկանց թրաֆիքինգին վերաբերող սոցիալական ու իրավական այնպիսի խնդիրներ, որոնք ունեն ոչ միայն քրեական, այլև սահմանադրաիրավական բնույթ: Ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, հետազոտվող թեման սոցիալական առումով ձեռք է բերել արդիականություն քանի որ, մարդկանց թրաֆիքինգը, ըստ էության, դարձել է մարդու արժանապատվության առևտրայնացում ենթադրող երևույթ:

Հեղինակը դիտարկելով մարդկանց թրաֆիքինգը սահմանադրաիրավական տեսանկյունից, բացահայտում է մարդկանց թրաֆիքինգի էությունը և բովանդակային

առանձնահատկությունները՝ առավել լայն ասպեկտով, ինչը աշխատանքի դրական կողմերից է:

Գրախոսվող աշխատանքի նպատակն է բացահայտել մարդկանց թրաֆիքինգի նկատմամբ խոցելիության բազմաշերտ բնույթը մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում, վերհանել պետության պոզիտիվ պարտականությունների բովանդակությունն ու սահմանադրաիրավական կառուցակարգերի միջոցով դրանց իրականացման հիմնախնդիրները, ինչպես նաև ձևակերպել այնպիսի մոտեցումներ և մեկնաբանություններ, որոնք համահունչ կլինեն միջազգային չափանիշներին և ազգային իրավական համակարգի պահանջներին:

Աշխատանքի բովանդակության ուսումնասիրությունից կարելի է հետևություն անել, որ հեղինակը լիարժեքորեն է լուծել իր առջև դրված նպատակն ու խնդիրները, իսկ ստացված արդյունքները գիտականորեն հիմնավորված են և տրամաբանորեն փաստարկված, որոնք ունեն տեսական և գործնական զգալի նշանակություն:

Քննարկվող ատենախոսական աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հեղինակը համապարփակ վերլուծության են ենթարկվել մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի սահմանադրաիրավական կարգավորումների և գործիքակազմերի հետ կապված խնդիրները: Բացի դրանից մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը զոհերի իրավունքների պաշտպանությունը հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ՝ համալիր կերպով ուսումնասիրվում են որպես մարդու արժանապատվության, սոցիալական պետության սահմանադրական անվտանգության փոխկապակցված սահմանադրաիրավական համակարգ: Աշխատանքի գիտական նորույթի տարրեր են պարունակում նաև պաշտպանության ներկայացրած մի շարք դրույթներում:

Աշխատանքում ձևակերպված առաջարկներն ու դիտարկումները ձևավորվել են ատենախոսության հետազոտության հիման վրա, ինչը կարելի է համարել սահմանադրական իրավունքի տեսության մեջ որոշակի ներդրում: Դրանք կարող են հիմք հանդիսանալ ինչպես ոլորտի սահմանադրական և օրենսդրական կարգավորումների կատարելագործման, այնպես էլ՝ հետագա տեսական հետազոտությունների համար: Առաջարկների, դիտարկումների հետևությունների արժանահավատությունը տեսականորեն հիմնավորված է հետազոտության

ընթացքում օգտագործված ճիշտ գիտական մեթոդաբանությամբ, գիտական և նորմատիվային աղբյուրների լայն շրջանակով, իսկ գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ մշակվել են այնպիսի առաջարկներ և դիտարկումներ, որոնք կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների պրակտիկայում և օրենսդրական կարգավորումների կատարելագործման ոլորտում:

Հեղինակի կողմից մշակվել են հստակ առաջարկներ, որոնք միտված են կիրառվելու մարդկանց թրաֆիքինգի դեմ արդյունավետ պայքարի և զոհերի իրավունքների պաշտպանության ընթացքում:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով աշխատանքը, ունենք որոշակի նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

Առաջին, աշխատանքում գիտական նորույթը ներկայացված է առավել ընդհանրական գծերով, մինչդեռ աշխատանքի բովանդակությունը պարունակում է կոնկրետ տեսական և գործնական բնույթի հետաքրքիր դրույթներ և առաջարկություններ, որոնք արժանի էին ամրագրել որպես հեղինակի կողմից գիտականորեն հիմնավորված հայեցակարգային մոտեցումներ:

Երկրորդ, թեև աշխատանքը կատարվել է սահմանադրահիրավական տեսանկյունից, գտնում ենք կարիք կար նաև որոշակիորեն կանգ առնել նաև ՀՀ նոր Քրեական օրենսգրքում արտացոլված մարդկանց թրաֆիքինգի հանցակազմի վրա, քանի որ նշված օրենսգրքի փիլիսոփայությունը ելակետ է ընդունել մարդկանց իրավունքների արդյունավետ պաշտպանության մեխանիզմը:

Սակայն վերոնշված նկատառումները, ըստ էության, կրում են ցանկությունների բնույթ և բոլորովին չեն կարող ազդել աշխատանքի դրական արժանիքների վրա:

Հեղինակի կողմից ընտրած մասնագիտական թվանիշը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը:

Աշխատանքի բովանդակությունը լիարժեքորեն են արտացոլված հեղինակի կողմից հրատարակված գիտական աշխատանքներում:

Գրախոսվող աշխատանքը քննարկվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի Պետահիրավական հետազոտությունների բաժնի 2026 թվականի հունիսի 18-ի նիստում, որին ներկա էին Պետահիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հ. Մ.

Ստեփանյանը, ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Հ. Սաֆարյանը, ավագ գիտաշխատող իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ա.Վ.Շուքուրյանը, կրտսեր գիտաշխատող՝ Վ. Խ. Հովսեփյանը:

Ելնելով վերոշարադրյալից, գտնում ենք, որ Սերգեյ Լյովայի Ղազինյանի «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը և զոհերի իրավունքների պաշտպանությունը» թեմայով ԺԲ.00.02 «Հանրային իրավունք- սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ավարտուն և ամբողջական հետազոտություն է, լիովին համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր կողմից հայցվող՝ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի Պետաիրավական
հետազոտությունների բաժնի վարիչ,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Հովհաննես Միքայելի Ստեփանյան

Պրոֆեսոր Հ.Մ. Ստեփանյանի ստորագրությունը հաստատում եմ՝ ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու Հ. Վ. Նազարյան